ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-2/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

11.03.2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության պլանավորման բաժնի պետ, գնդապետ Ա. Վարդանյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:
Բացակայում է ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության ՆՏԱ բաժնի շահագործման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ղևոնդյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի (ՀԲՄ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակցի՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը առկա են և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:
1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 12.03.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Ալելի» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:
1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն: Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետ չկիրառել, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատող Ա. Վարդանյան

Գնահատող Տ. Գասպարյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան